15 ՅՈՒԼԻՍ 1994 ՇԱԲԱԹ # 133 (636)

Azg
Azg
armenian daily

SABCO
SABCO
OVERSEAS TRADING LTD.
LIMASSOL CENTRE,
BLOCK B, SUITE 307,
P. O. BOX 6543
TEL +357-5-370962
FAX. +357-5-370945
OUR BANKERS: B. E. M. O. BANK, LIMASSOL, CYPRUS; FEDERAL BANK OF THE MIDDLE EAST, LIMASSOL, CYPRUS; BANK OF CYPRUS, LIMASSOL, CYPRUS; HELLENIC BANK, LIMASSOL, CYPRUS
Հայաստանի եւ ԱՊՀ երկրների համար
Կիպրոսի եւ Ռոտերդամի պահեստներից
ՃՈՒՇԱՌՏ, ՄԹԵՐՔ, ԽՄԻՉՔ, ԿՂՁՈՒԹՅՈՒՆ
ուղիղ հասցեատիրոջը՝ նավով եւ իմՕնաթիռով

ՄՐՑՊԵՏԱԿԱՆ

Վսեւոլոդ Օլեանդրով. «Ես գոհ եմ հայ-ռուսական բանակցություններից»

Այսօր Երեւանում կավարտվեն չորեքշաբթի օրը սկսված Հայաստանի եւ Ռուսաստանի պետական պատվիրակությունների բանակցությունները: Ա ոայժմ որեւէ փաստաթուղթ չի ստորագրվի, սակայն ինչպես երեկ հայտարարեց ռուսական պատվիրակության ղեկավար, հատուկ հանձնարարությունների գծով դեսպան Վսեւոլոդ Օլեանդրովը, բանակցություններն անցել են հաջող եւ կողմերը գոհ են դրանց ընթացքից: Քննարկվել են ինչպես տնտեսական, այնպես էլ ռազմա հաղաքական պլանին վերաբերող մի շարք հարցեր:

Անդրադառնալով Հայաստանի ռուսական ռազմական հենակետերի կարգավիճակի խնդրին, պարոն Օլեանդրովը նշեց, որ այդ հարցում նկատվում է առաջխաղացում: Միեւնույն ժամանակ նա նշեց, որ Հայաստանի խորհրդարանի ընդունած որոշումը պետք է իրավաբանորեն եւ տեխնիկապես հարմարեցվի նման պայմանագրերի վավերացման միջազգային պրակտիկային, եւ հարցը ոչ այնքան քաղաքական է, որքան իրավաբանական եւ իմաստագրական:

Քննարկվել է նաեւ աղեսի գոտում աշխատող «Հայուրալսիբքիմ» ֆիրմայի հետագա ճակատագրի հարցը: Ըստ դեսպանի, առայժմ ֆիրման կշարունակի իր աշխատանքը: Վսեւոլոդ Օլեանդրովը նշեց նաեւ, որ Լեռնային Ղարաբաղի հարցն այս բանակցությունների ընթացքում չի քննարկվել, բայց այն, որ շրջափակումը ազդում է նաեւ տնտեսական համագործակցության վրա, հավի չառնել անկարելի է:

ՀԵՐՔՈՒՄ

Լրագրող Վլադիմիր Մուկուսեւի հայտարարությունը մտացածին է

ՄՈՍԿՎԱ, 14 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ- Ինչպես արդեն հաղորդել են զանգվածային լրատվության մյուղոցները, Վլադիմիր Մուկուսեւը մեկ շաբաթ համարվում էր կորած եւ որոնվում էր Ղրիմի իրավաղահ մարմինների կողմից: Բայց հուլիսի 10-ին Մուկուսեւը հեռազանգել էր Մոսկվա՝ կնոջը, եւ հուլիսի 11-ին մեկնել տուն: Մոսկվա ժամանումից հետո ելույթ ունենալով «Ազատություն» ռադիոյի իրիկնային ծրագրով, նա մասնավորապես հայտնեց, որ Ղրիմում տեղաբաշխված ուկրաինական զորամասերից մեկում իրեն մի գաղտնի չիասաթուղթ էին տվել, որը կազմված էր Մոսկվայում ուկրաինական լրտեսից ստացված տվյալների հիման վրա: Փաստաթղթում, Մուկուսեւի ասելով, ինդվում է, թե կովկասյան ազգության երկու անձանց 150 հազար ամերիկյան դոլար է տրվել այն բանի համար, որ նրանք սպանեն Լեռնային Կուչմային, եթե վերջինս դառնա Ուկրաինայի նախագահը: Ղրիմում Ուկրաինայի անվտանգության ծառայության գլխավոր վարչությունում, ուր դիմել էր ՆԵԳՍ-ի թղթակիցը պարզաբանումներ ստանալու համար, հայտարարեցին, որ դա «ծայրեծայր մտացածին է» եւ հրաժարվեցին որեւէ մեկնաբանություն տալ:

ՀԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Լ. Չուրաբյան. «Ղարաբաղի հարցում Թուրքիան չի կարող մասնակցել խաղաղարար որեւէ գործողության»

«Այդրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում Թուրքիան չի կարող մասնակցել խաղաղարար որեւէ գործողության (նույնիսկ պետության խնդրանքով). բանի դեռ հակամարտության ողջակի մասնակից է եւ իրականում Հայաստանի դեմ շրջափակումը», երեկ հայտարարեց ՀՀ նախագահի մամուլի խոսնակ Լեւոն Զուրաբյանը. միաժամանակ նշելով, որ Թուրքիայի մասնակցությունը խաղաղարար ձեւական դաստան կարելի է համարել հայ-բուրխական դիպլոմատիական հարաբերությունների բացակայությունը:

Անդրադառնալով ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման Հայաստանի դիրքորոշումներին, նա նշեց, թե Հայաստանը ոչ մի դեպքում չի հրաժարվում տեղի ունեցող ռազմական գործողությունների դադարը. բայց միաժամանակ իր անհանգստությունն է հայտնում զինադադարի իրավաբանական ձեւակերպման բացակայության վերաբերյալ: Նրա ասելով, բանի դեռ որեւէ փաստաթուղթ չի ստորագրվել եւ զինադադար չի հաստատվել, ամեն ինչ մնում է կողմերի բարի կամքի վրա, իսկ դա վտանգավոր է:

Տես էջ 2

ՔՐՅԱՆ

«Հա. Կիպրոսի նկատմամբ արգելքն անարդարացի է»

ԱՆԿԱՐԱ, 14 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ- «Թուրքիայի ձայն» ռադիոկայանի հաղորդման համաձայն Թուրքիան հայտարարել է, որ Եվրամիության կողմից հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության նկատմամբ կիրառվող արգելքն անարդարացի է եւ կարող է բացասական ազդեցություն ունենալ նրանում խնդրի կարգավորման նպատակով գործադրվող ջանքերի վրա: Թուրքիայի արտգործնախարարության ներկայացուցիչ Աբանսեն ասել է, որ Թուրքիան կշարունակի այդ հարցում օգնություն ցույց տալ հյուսիսային Կիպրոսի «Թուրքական Հանրապետության»:

Ռուսաստանը կմասնակցի ՆԱՏՕ-ի խաղաղարար գործողություններին

ԲՐՅՈՒՍԵԼ, 13 ՀՈՒԼԻՍ, ՌԻՈ ՍՆՊԲԻ: Հայող օսքաբ ՆԱՏՕ-ի Բրյուսելի կենտրոնական կմասնակցեն Ռուսաստանի զինվորական գործակալներ, որոնք կմասնակցեն Բոսնիայում խաղաղարար գործողության կոմպլեքսային ռազմավարության խմբի աշխատանքին, հայտարարեց ՆԱՏՕ-ին ներկայացնող մի զինվորական աղբյուր: Գործողությունը պետք է սկսվի իրականացվել այն բանից հետո, երբ հուլիսի 18-ին բոսնիացի սերբերն ու մուսուլմանները դադարեցնան տան շարման խմբի առաջարկություններին:

■ *Բոլոր ընդհանրից: Կրասնոյարսկի ինքնաթիռաշինական կոմբինատի տնտեսության զարգացման բանվորների բնդհանուր աշխատող հերթափոխը հրաժարվեց հերթի մասնակցությունից բարձրացնել աշխատանքային հերթափոխի ավարտից հետո: Գործի 30 ամսվա գործելի բաշխի չնչնարվելու կապված է աշխատավարձի վճարման պակասելի հետ, որ նրանք չեն ստացել մայիսից:*

ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿԵՏ

Ամերիկյան նոր 100 դոլլարանոցներ 1996 թ.-ին

Հայաստանում Մ. Նահանգների դեսպանությունից ստացել ենք հետեւյալ հաղորդագրությունը.

Մ. Նահանգների գանձային քարտուղար (նախարար) Լլոյդ Բենտսենը հուլիսի 13-ին հայտարարեց, թե առաջիկա մի քանի տարիների ընթացքում Մ. Նահանգների 100 դոլլար արժեքությամբ եւ այլ դրամանիշների դիզայնը փոփոխվելու է: Դիզայնի փոփոխությունների փորձարկումն ու հետագա կատարելագործումը տեղի կունենա 1995 տարեշրջանի ընթացքում իսկ նոր տարբերակներ շրջանառության մեջ կմտնեն 1996 թ.-ին:

Արտահայտելով, 100 դոլլարանոց դրամանիշը կշարունակեն ունենալ մեծ մնալ, նարդեսկ 1996 թ.-ին հետ «Մ. Նահանգների գույքագրման բյուրո դրամանիշների կանոնակարգ գործածվել. սակայն Բենտսենը, ամերիկյան ոչնչ դրամանիշ չի դրամափոխվելու չի արժեզրկվելու եւ ամբ կեղծած չի ամարվելու»:

Մ. Նահանգների գանձային նախարարության նպատակն է. ուժեղ, կայուն, ճանաչելի դրամանիշ: Հնի դրամանիշերը կարժենան ճիշտ այնքան, որքան նորերը: Անկախ այն բանից, թե 100 դոլլարանոցները դրանք հին են, սակայն Բենտսենը. դրանք արժեն 100 դոլլար, եւ միշտ էլ արժենալու են 100 դոլլար:

Բացի վերոհիշյալ դրական հաղորդագրությունից, դոլլարի դիզայնի փոփոխության մասին մեզ հայտնի դարձան նաեւ այլ մանրամասնություններ: Այսպես առաջին հերթին շրջանառության են դրվելու 100 դոլլարանոցները, այնուհետեւ հաջորդող 612 սանիսներին մյուսներ: Խոսելով դրամանիշների նոր դիզայնի ստեղծման ծախսերի մասին, Մ. Նահանգների Ֆինանսներին նախարարության քարտերը հայտնեց, թե դրանք կկազմեն շուրջ 500 հազար դոլլար. իսկ տեղական 100 դոլլարանոցների արտադրության գինը յուրաքանչյուր դրամանիշ հասնում կլինի 3.8-4.8 սենտ: Նոր նախարար Բենտսենը հայտարարել է, թե դիզայնի փոփոխությունը 60 տարի փոփոխություն չկրած ամերիկյան դրամանիշի համար անհրաժեշտ է, ասի որ կարիքներ հեշտանան ապրելի կատարելագործված տարիներ մյուսներն են օգտագործում եւ, հետեւաբար, նոր դիզայնի դրամանշանը տեխնոլոգիական խնդրանքներ ունի, ինչպես նաեւ կատարելագործված ոչ-ի չիներ: Ոչ վերաբերում է նոր նմուշներին, դրանք վերաբերում են եւ բոլորին, եւ բանակին եւ զինվորներին: Մասնավորապես, նոր դրամանիշերն ունենալու են «հրազանթային» այնպիսի տարբերություններ, որոնք դյուրանանալիորեն դեղերում խանգարելու են իրար, ստեղծելով դրանով նշանակալի գունային տարբերություններ:

ԿՈՒՍՏ

Փախուստ Ռուանդայից Զայիր

ՆԻՐՈԲԻ, 14 ՀՈՒԼԻՍ, BBC, ՌՏՍ- մամուլում միջին հաշվով 10 հազար փախստականներ Ռուանդայից փախչում են դեպի Զայիր. մինչ քանի ընթացքում տասնյակ զորամասերն առաջանում են ոնեի կոտորածներն զորի դիրքը: Ռուանդայի երեսի երեսին գտնվող քաղաքի եւ դեպքերի զինված ուժերն արդեն գրավել են սահմանները Ռուանդեր հայրենի եւ ընդամենը 20 կմ հեռավորության վրա են գտնվում մեծամասնությամբ հուտու ցեղախմբից ներկայացված կառավարական զորքերի դիրքերից:

Հանդիպում Կրասնոյարսկ

ՏՈՒՆԻ, 13 ՀՈՒԼԻՍ, ՌՏՍ-ԹԱՍ- ՍԵՆՊԵԹԵՍ 40 տարվա կարի եւ հեռուստահաղորդակցության մյուղոցների նախարարների համաժողովը կկայանա սեպտեմբերին Ճապոնիայի Կիոտո քաղաքում: Հանդիպումի ընթացքում նախատեսվում է քննարկել հարաբերական լրատվական համակարգերի զարգացման ուղիները, որոնց զարգացումը ապասվում է 21-րդ դարում:

ԱՍԻԱՄԻ

Նվեր Ֆրանսիայի ազգային տոնը

ՓԱՐԻԶ, 14 ՀՈՒԼԻՍ, ԲՏՍՊ-ՏԱՍՍ ԱԲՍԵՆՊԵՆԻ, BBC- Այսօր մինչեւ ուշ գիշեր ամբողջ հարաբերում անցկացվում են ժողովրդական զանգվածներ, լսվում է երաժշտություն: Փարիզի բնակիչների ազգային տոնը Բաստիլի գրավման օրն, սկսեցին նշել դեռ տասնհինգերորդ դարերում: Այսօր Փարիզի գլխավոր դրամատան Շան դ'Էլիզեյում տեղի ունեցավ զինվորական շքերթ, որին, բացի ֆրանսիական բանակի տարբեր զորամասերից մասնակցում էին նաեւ ռուսական եւ բելգիական բանակների կազմերի. 200 գեներալներ, ինչպես նաեւ ՆԱՏՕ-ի անդամության եւ այլոց եւ ծանոթ: Շքերթի ընթացքում դրամատան երկայնքին հանդիսված բազմությունը, որի շարքում էր չլինի նրանք, ովքեր տեսել եւ հիշում էին 54 տարի առաջ նմանատիպ զեղեցիկ զորքերի տարածումը նույն վայրում, դեռ հանդիսանալի կամար առաջանալիս. ասոյցներով ու բազմաբնակությունները դիմավորեցին զինվորական բանակի մոտիրածգայինները: Այսպիսով, լարը միջադեպեր չդարձան:

digitised by A.R.A.R.@

տեղական

ԱՏՈՄԱԿԱՅԱՆ

Մեծ Բրիտանիան կարող է աջակցել հայկական ԱԷԿ-ի վերաբացմանը

Հուլիսի 13-ին, ՀՀ վարչապետ Հրանտ Բագրատյանի հետ հանդիպման ժամանակ Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Բրայըն Ֆոուլը նշեց, որ նկատի առնելով հայկական ատոմակայանի վերագործարկման խնդրում Հայաստանի իշխանությունների վճռականությունը, ինքը կնպաստի օգնության կազմակերպմանը՝ ատոմակայանի անվտանգության եւ հուսալիության բարձր մակարդակն ապահովելու համար: Վարչապետը ներկայացրել է Հայաստանի սոցիալ-տնտեսական կացությունը, ծանրաբարձ տնտեսական բարեփոխումների, սեփականաշնորհման ընթացքին, երկարաժամկետ եւ կարճաժամկետ տնտեսական ծրագրերին ու դրանց իրականացման խնդիրներին, գյուղատնտեսության վիճակին եւ այլն: Նա ավելացրել է, որ անցումը շուկայական տնտեսությանը սոցիալական առումով թերեւս այնքան ծանր չլիներ, եթե Արեւմուտքը փոքր ինչ ավելի ակտիվորեն վարկեր տրամադրեր Հայաստանին եւ խոշոր ներդրումներ աներ: Նույն օրը դեսպան Ֆոուլին ընդունել է նաեւ ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Տեղի է ունեցել զրույց ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման, հայկական ատոմակայանի վերաբահագործման, հայկական դրամի կայունացման եւ այլ հարցերում Մեծ Բրիտանիայի հնարավոր աջակցության շուրջ: Դեսպանն իր գոհունակությունն է հայտնել դարաբաղյան հակամարտության կարգավորման ԵԱՀԽ-ի եւ Ռուսաստանի ծրագրերի վերջին ժամանակաշրջանում արձանագրված մոտեցման կապակցությամբ: Տեղեկություններն ստացվել են ՀՀ կառավարության եւ ՀՀ նախագահի մամուլի ծառայություններից: ՆՏ

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

Երեւանը համագործակցում է Ռուսաստանի հարավի հետ

Հուլիսի 7-8-ը Կրասնոդարում կայացել էր Ռուսաստանի հարավային հանրապետությունների ասոցիացիայի նիստը, որին մասնակցում էր նաեւ Երեւան քաղաքի ներկայացուցիչը: Այս մասին երեկ կայացած մամուլի ասուլիսի ժամանակ տեղեկացրեց Երեւանի քաղխորհրդի նախագահի առաջին տեղակալ Յուրի Բախչյանը: Բանն այն է, որ Երեւանն այդ կազմակերպությունում ասոցացված անդամ է, եւ հանդիպման ընթացքում առաջ է քաշվել այն միտքը, թե քանի որ հայ-մանուհիներին, առա որոշ. Բախչյանն այն կարծիքը հայտնեց, թե կարելի է քննարկել մայրաքաղաքամերձ գյուղերում գտնվող տնտեսությունները ստացվող շահույթն այդ նպատակով օգտագործելու խնդիրը, սակայն քաղխորհրդի կրթության վարչության ղեկ Օնիկ Վաբյանն իսկույն էլ մերժեց այդ գաղափարը հայտարարելով, թե անհնար է տնտեսական խնդիրներով լուծել 30 հազար ուսանողների սոցիալական խնդիրները:

Ինչ վերաբերում է մարզային ոլորտին, ապա այստեղ նույնպես հիմնական խնդիրները կապված են միջոցների բացակայության հետ: Ասոցիկայում Կրասնոդարում տեղի կունենան մարզական միջոցառումներ, որին ամենայն հավանականությամբ կմասնակցեն նաեւ Հայաստանի տարբեր թիմեր ու մարզիկներ, սակայն ֆինանսական միջոցների բացակայությունը կարող է զգացնել տալ: Ի դեպ, վաղը Երեւանի Հրազդան մարզադաշտում տեղի կունենա ֆուտբոլային սուզողական հանդիպում Հայաստանի եւ Մալթայի հավաքականների միջեւ: Այդ առթիվ Երիտասարդների տաղտի վարչությունից տեղեկացանք, թե դաշտն առդեն ղաստաս է, իսկ հանդիսատեսները ղաստաս կլինեն այսօր: Մինչդեռ «Հրազդան» մարզահամալիրը տնտեսավարկային հիմնարկ է, դեռեւ մի քանի հարյուր տոննա ոսդ ու լորի: Առաքումների առաջին զանգվածը՝ 13 միլիոն էկյու արժողությամբ, բաշխվելու է կովկասյան հանրապետությունների բնակչության հետեւյալ խավերին. հղի կանանց, միայնակ թոշակառուներին, փախստականներին եւ նրանց, ովքեր տուժել են հակամարտություններից: Նախատեսված է Հայաստանին տրամադրել 4, Ադրբեջանին՝ 5, իսկ Վրաստանին՝ 4 միլիոն էկյուի չափով օգնություն:

Մնացյալ 7 միլիոնի երկրորդ զանգվածը տրամադրվելու է Տաջիկստանի եւ Կրգզստանի վտանգված շրջանների բնակչությանը, ընդ որում, առաջինը ստանալու է 4, իսկ երկրորդը՝ 3 միլիոն էկյու արժողությամբ ալյուր, բուսական յուղ շաքարավազ եւ պրոտեին պարունակող թխվածքաբլիթ: Օգնությունը բաժանելու ժամկետ է նշանակված այս տարվա հոկտեմբերից մինչեւ հաջորդ տարվա մարտը:

■ *Մեկ կիլոգրամ սեյիտրան՝ 48 դրամ:* ՀՀ գյուղատնտեսության նախարարությունից հայտնեցին, որ ընթացիկ տարում «Հայքիմրեմոնտ» հանրապետական արտադրական միավորման միջոցով Հայաստան է ներկրվել 16 վագոն ընդհանուր հանակով, 960 տոննա սեյիտրա: Բացի դրանից ավտոմեքենաներով բերվել է եւս 150 տոննա: Երբ հարկի առնենք, որ անցյալ տարվանից կարտահանվել է 980 տոննա սեյիտրա, ապա ընդհանուր հանակը կհասնի 2090 տոննայի: Այն բաժանվել է հանրապետության հանդարա բոլոր շրջանների համապատասխան միավորումներին: Սեյիտրայի մեկ կիլոգրամը վաճառվում է 48 դրամով, իսկ որոշ շրջաններում՝ ավելի էժան:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

Կապահովվի գաղթականներ՛ի պաշտպանությունը

ԵՐԵՎԱՆ, 14 ՀՈՒԼԻՍ, ՄՆՄՐ: Անցյալ տարվա հոկտեմբերին նախաստորագրված եւ 1994 թ. հուլիսին ԱՊՀ բոլոր պետությունների կողմից վավերացված գաղթականների ու տեղահանվածների ծգնության համաձայնագիրը հիմնական ապահովում է այդ կարգի քաղաքացիների սոցիալական պաշտպանությունը ԱՊՀ տարածքում: Այդ մասին այսօր հայտարարեց Հայաստանի գաղթականների գործերի պետվարչության գաղթի եւ մարդասիրական օգնության համակարգման վարչության պետ Լիլիա Կալիյանը:

Ներկայումս շուրջ 240 հազար գաղթական ունեցող Հայաստանին հաստատ հետաքրքրում է համաձայնագրի 7-րդ հոդվածը, որտեղ ասվում է, որ այն պետությունը, որի տարածքը հարկադրաբար լքել են գաղթականները, պարտավորվում է փոխհատուցել նրանց բողած կամ կորցրած բնակարանի ու կայքի արժեքը, ըստ որում, շարժական եւ անշարժ կայքի հաշվառման կարգը, ինչպես նաեւ դրա գնահատումն իրականացնելու է շահագրգիռ կողմերի համատեղ հանձնաժողովը: Կալիյանի կարծիքով, գաղթականների բողած կայքի փոխհատուցման մասին հնարավոր կլինի միայն ԱՊՀ պետություններում գաղթականների ու տեղահանվածների օգնության միջոցեսական հիմնադրամի ստեղծումից հետո: «Հուսով եմ, որ 1992 թ. գաղթականների հարցերի վերաբերյալ Ադրբեջանի հետ ընդհատված բանակցությունները կվերսկսվեն», հայտարարեց նա:

ԵՀ-ի հառաջիկա օգնությունը՝ 20 միլիոն էկյու

Եւրոպական Հանձնաժողովը 20 միլիոն էկյու (24,7 միլիոն դոլար) է տրամադրել որպես անմիջական սննդի օժանդակություն Հայաստանին, Ադրբեջանին, Վրաստանին, Տաջիկստանին եւ Կրգզստանին, հուլիսի 13-ին հաղորդել է UPI միջազգային լրատվական ծառայությունը: «Այդ երկրներում տնտեսական վիճակի արագ վատթարացումը հաշվի առնելով՝ ԵՀՆ օգնության ծեռք է մեկնում գնելով, տեղափոխելով եւ բաժանելով ամենասահիրաժեշտ մթերքները», նշել է ԵՀ-ի խոսնակը: Օգնության փաթեթի մեջ մտնելու են 25 հազար տոննա ծավարեղեն, 4 հազար տոննա բուսական յուղ, 2 հազար տոննա շաքարավազ, հազար տոննա կաթնամթերք եւ մի քանի հարյուր տոննա ոսդ ու լորի: Առաքումների առաջին զանգվածը՝ 13 միլիոն էկյու արժողությամբ, բաշխվելու է կովկասյան հանրապետությունների բնակչության հետեւյալ խավերին. հղի կանանց, միայնակ թոշակառուներին, փախստականներին եւ նրանց, ովքեր տուժել են հակամարտություններից: Նախատեսված է Հայաստանին տրամադրել 4, Ադրբեջանին՝ 5, իսկ Վրաստանին՝ 4 միլիոն էկյուի չափով օգնություն:

Մնացյալ 7 միլիոնի երկրորդ զանգվածը տրամադրվելու է Տաջիկստանի եւ Կրգզստանի վտանգված շրջանների բնակչությանը, ընդ որում, առաջինը ստանալու է 4, իսկ երկրորդը՝ 3 միլիոն էկյու արժողությամբ ալյուր, բուսական յուղ շաքարավազ եւ պրոտեին պարունակող թխվածքաբլիթ: Օգնությունը բաժանելու ժամկետ է նշանակված այս տարվա հոկտեմբերից մինչեւ հաջորդ տարվա մարտը:

ԼՈՆԴՈՆ

«Անգլիացիները հրճվում են հայկական ջեմերով»

Անգլիայից ստացված հաղորդագրության մեջ այսպես է մեկնաբանվել Լոնդոնում անցկացվող տարեկան գյուղատնտեսության արդյունքների ցուցահանդեսի հայկական տաղավարի մոտ ստեղծված հակադրական հերը. հայկական գյուղատնտեսության նախարարության տեխնիկական աջակցությամբ մասնակցում Լեւոն Խաչատրյանը, ավելացնելով, որ «մարդիկ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում հատկապես մեր ընկույզի, բալի եւ դդումի մուրաբաների, ցանկանալով իմանալ, թե որտեղ կարող են դրանք ձեռք բերել: Ես վստահ եմ, որ մեր կոնյակի, գինու եւ օղու կողքին, այս արտադրանքները մեծ ժողովրդականություն կունենան անմիջապես որ հայտնվեն խանութներում»:

Ինչպես արդեն հաղորդել էինք հուլիսի 7-ի մեր համարում, հուլիսի 4-ին Լոնդոնում բացված այս մեծաքանակ ցուցահանդեսին Հայաստանը մասնակցում էր ապրիլի անգամ որպես իմքնուրույն, անկախ պետություն: Բացի Հայաստանից նախկին Խորհրդային Միությունից դրան մասնակցում էր նաեւ Լատվիան: Մեր դեսպանությունը դեռեւս դեկտեմբեր Գայլիկ Շահբազյանի կարեւորելով այս հանգամանքը, ասել է, որ առաջին հերթին դա անհրաժեշտ էր միջազգային ասպարեզում Հայաստանի իշխող բարձրացնելու տեսակետից: Այնուհետեւ դա մեզ համար հնարավոր էր ծանոթանալու ներկայացված միջազգային ապրանքատեսակներին, եւ տեսական ծանոթություններին: Իսկ այն հարցին, թե արդյոք դա նաեւ բաղաքական նշանակություն ուներ, որպես Շահբազյանը պատասխանել է, որ Հայաստանի մասնակցությունը իր տեսակի մեջ այդ մեծագույն եւ կարեւորագույն ցուցահանդեսին ցույց է տալիս, որ մենք միջազգային ասպարեզ ենք մտնում որպես առեւտրական հասարակության գործընկեր:

Հուլիսի 5-ին BBC կայանի միջազգային լրատվության բաժինն իր «Տեսակետ» հաղորդման ժամանակ հատուկ տեղ է հատկացրել ցուցահանդեսին եւ դրանում տեղ գտած հայկական տաղավարին:

Տաղավարի այցելուների թիվն ելնել են Երեւանխորհրդարանի անդամ որոշ Ջոն Կոռին, որն այնքան է տպավորված եղել, որ խոստացել է Երեւանխորհրդարանում արծարծել այդ բնագավառում Հայաստանին ի նպաստ գանձված հարց: Պարագայի էկոնոմիկայի նախարար, Պակիստանի գյուղատնտեսության նախարար, եւ Գանայի գյուղատնտեսության փոխնախարար, որոնք շնորհավորել են Հայաստանին տաղավարի ձեւավորման եւ բարձրորակ արտադրանքի ցուցադրման առիթով:

Ցուցահանդեսի օրերին մեր դեսպանությունը եւ Լոնդոնում ՀՀ դեսպանատան ներկայացուցիչներն առիթ են ունեցել հանդիպելու Անգլիայի գյուղատնտեսության Արդյունաբերության ընկերության նախագահ Լորդ Պրոմի եւ արդարադատության նախարարի հետ, որոնք մեծարանք հետաքրքրվելով Հայաստանի գյուղատնտեսության զարգացման ներկա վիճակով, որպես բանակցություն են հայտնել ապագայում այդ բնագավառում:

ԿԱՐԾ

Էլեկտրոնային համալսարան

ԵՐԵՎԱՆ, 12 ՀՈՒԼԻՍ, ՓՍՍ: Հայկական հանրապետական հեռահաղորդակցման լրատվական հաշվողական «Որոնում» կենտրոնը ՅՈՒՆԵՍԿՕ-ի հայաստանյան ազգային հանձնաժողովի աջակցությամբ ծրագրել է Հայաստանում ստեղծել էլեկտրոնային համալսարան, որը առաջինը կլինի Արեւելյան Եւրոպայում եւ ԱՊՀ երկրներում: Այս համալսարանի նախատիպը արդեն ստեղծվել է Նյու Ջերսիում, որի գործունեության հիմքում ընկած է Պոլ Լեւինսոնի մշակած համակարգիչների օգնությամբ իրականացվող կրթական ծրագիրը: Նյու Ջերսիի համալսարանում հազարավոր մասնագետներ են դաստաստվել Ամերիկայի 28 նահանգներից եւ 12 երկրներից: Այժմ «Որոնում» կենտրոնը բացառիկ հնարավորություն է ստեղծում Հայաստանի կրթական համակարգում որակական նոր քայլ կատարելու համար: Այս ծրագրի ղեկավարն է «Որոնում» կենտրոնի տնօրեն Գրիգորի Սահակյանը: Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ավելի ամրապնդել եւ գիտական հիմքի վրա դնել Արեւմուտքի հետ հանդուրժող գործնական կապերը, ապահովել երիտասարդ մասնագետների դաստաստմանը, միջազգային կապերի ընդլայնմանը եւ կրճատյանի կապերը հասարակական անուն ունեցող փոխանակությունների հետ: Համալսարանի ստեղծումը կնպաստի նաեւ միջազգային էլեկտրոնային անձագրերին ու թերթերին հաղորդակից լինելուն ինչպես նաեւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի տեղեկատվական բազային ծանոթանալուն:

■ *Ամփոփվել են առաջին կիսամյակի արդյունքները:* ՀՀ Արդյունաբերության նախարարության լրատվության կենտրոնի տնօրեն Գ. Գիրգորյանը հայտնեց, որ այս տարվա առաջին կիսամյակում նախարարության ձեռնարկությունները տվել են 16 միլիոն 130 միլիոն 868 հազար դրամի արտադրանք նախորդ տարվա նույն կիսամյակի 15 միլ. 883 միլ 809 հազարի փոխարեն: Արտադրանքի արդյունքը կազմել է 101,56 տոկոս:

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Լեւոն Ղարաբյան. «Ղարաբաղի հարցում Թուրքիան չի կարող...»

Սկիզբը էջ 1

Հայաստանը եւ Լեռնային Ղարաբաղը մինչեւ օրս համաձայնելով ԵԱՀԽ եւ Ռուսաստանի խաղաղության բոլոր առաջարկներին, իրենց համաձայնությունն են տվել ստորագրելու ԵԱՀԽ կողմից ներկայացված մայիսի 19-ի փաստաթուղթը, դիտելով այն որպես զինադադարի դեմ յուրաքանչյուր նախաձեռնում է զինադադարի մասին պարտավորության ստորագրում եւ հակամարտության գոտի միջազգային դիտորդների՝ որդեկում: «Հայաստանը անհանգստացած է, որ Ադրբեջանը հրաժարվել է իր նախկին դիրքորոշումից, երբ պատրաստակամություն էր հայտնել ստորագրելու մայիսի 19-ի փաստաթուղթը», ասաց նա: Լեռնային Ղարաբաղը հայտարարեց նաեւ, որ ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության լուծումը հնարավոր է միայն երկու կողմերի փոխզիջման դեպքում: «Փոխզիջման բանալին հետեւյալն է. Ղարաբաղը պետք է հեռ բաշվի գրաված տարածքներից, բացի Հայաստանը եւ Լեռնային Ղարաբաղը կապող միջանցքից, փոխարենը ստանալով բնակչության անվտանգության երաշխիքներ հակամարտող կողմերի միջեւ բաժանարար ուժերի տեղակայման միջոցով: Ադրբեջանը ոչ մի հանձնայնի բաժանարար ուժերի տեղակայմանը փոխարենը վերականգնելով վերահսկողությունը գրավյալ տարածքների վրա», նշեց մամուլի խոսնակը: Դա նաեւ հայտնեց, որ բաժանարար ուժերի տեղակայումը կարող է լինել կարգավորման առաջին փուլի վերջին կետը կամ երկրորդ փուլի առաջին կետը, բայց ամեն դեպքում այն պետք է նախորդի երկրորդ փուլի իրականացմանը: «Եթե այսօր տեղակայվեն բաժանարար ուժերը, այսօր հենց կարող է խոչընդոտվել երկրորդ փուլը», ասաց նա: Միեւնույն ժամանակ Հայաստանը անհիմն է համարում Ադրբեջանի ղեկավարների այն պնդումները, թե իբր Ադրբեջանը չի կարող ընդունել առաջարկվող խաղաղության ծրագիրը ներքին հասարակական կարծիքի պատճառով: Լեռնային Ղարաբաղը մխեց նաեւ Ադրբեջանի ԳԽ նախագահի այն հայտարարությունը, թե հուլիսի 30-ին նախատեսվում է ստորագրել հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման ամբողջական համաձայնագիր: Ընդհանուր առմամբ հակամարտության խաղաղ կարգավորման հարցում մամուլի խոսնակի գնահատականներով, առայժմ լուրջ շրջադարձ չկա:

ՈՒՍՄԱՎԻՐ ԱԶԳԱՏԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հասարակության Դ տարի
Ինքնագիր եւ հրատարակչ
«Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թելե 562941, AT&T (7 88527 151065
Գլխավոր խմբագիր
ՅՈՒՍԻՖ ԱԼԵՅԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՅՈՒՍԼԵՆ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 529221
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍՅԱՆ / 562863
A STYLE հանձնակատարային
ծառայություն / 561841
Էջը եւ տարածքները պատրաստվել են
Apple Macintosh
համակարգչային ծառայության
«Ակտ» թերթի
Azg
ազգային օրաթերթ
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱՀԿ

ՇՐՋԱՆ ԱՊՀ

Վրաց-արխազական հակամարտության կարգավորման հառակողմ համաձայնագրի ստորագրումից՝ եւ հակամարտության գոտի ռուսական խաղաղարար ուժեր մտցնելուց (ադրիլ հունիս, 1994 թ.) հետո Վրաստանում կրկին բորբոքվեցին հաղթական կրքերը:

Անցյալ ամռան կեսերին անցկացվեց Վրաստանի խորհրդարանի դռնփակ նիստ, որտեղ խորհրդարանային ընդդիմությունը «կոխով տվեց» ներկա իշխանությունների դեմ: Խորհրդարանային ընդդիմությունը համառորեն պահանջում է Էդուարդ Շեւարդնաձեի հրաժարականը, նրան մեղադրելով այն բանում, թե նա ի վիճակի չէ դադարեցնել Վրաստանի տարածքային ամբողջականությունը, որին կարող են սպառնալ ռուսական խաղաղարար ուժերը վրաց-արխազական հակամարտության գոտում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Վրաստան. Իշխանություն-ընդդիմություն խաղեր խորհրդարանում եւ փողոցներում

Հուլիսի 7-ին Վրաստանի Միացյալ հանրապետական կուսակցության նախագահ Մերաբ Ռուիդիան հանդես եկավ հայտարարությամբ, թե՝ «Վրաստանի համար ընդունելի է դեռեւս կառուցվածքի այն ձեւը, որը ներկայումս գոյություն ունի Ռուսաստանում»: Հենց այս տեսակետից Աբխազիան կարող է ստանալ Ռուսաստանի Դաշնության կազմի մեջ մտնող հանրապետություններին հատուկ իրավունքներ ու լիազորություններ: Միացյալ հանրապետական կուսակցության նախագահի այս հայտարարությունը վկայում է, որ Աբխազիայի հարցով ընդդիմադիրների հայացքներում բեկում է կատարվել: Նախկինում ինչպես խորհրդարանային, այնպես էլ ոչ խորհրդարանային ընդդիմությունը հանդես էր գալիս հանրապետության դաշնակցային կառուցվածքի դեմ:

Խորհրդարանում Էդուարդ Շեւարդնաձեի կողմնակիցների առձգանքը լավագույնս հնչեց. «Վրաց-արխազական հակամարտության գոտի Ռուսաստանի խաղաղարար ուժեր մտցնելը, միանգամայն արդարացված է եւ թելադրվում է առկա իրողություններով, իրենց հերին խորհրդարանում հսկաճառեցին Շեւարդնաձեի կողմնակիցները: Այդ առաջարկությունը ձախողելու բոլոր փորձերը համարում եմ Վրաստանի պետական շահերի ոտնահարում», Մեարֆ գործակալությանը հայտնեց խորհրդարանի փոխնախագահ Վախթանգ Ռճեուլիվիլին:

Խորհրդարանի ընդդիմադիր կուսակցությունների կազմակերպած հուժկու շարժումը հանրահավաքների վերածվեց դեռ 1994 թ. մայիսին: Դրանց կարգախոսն էր. «Օկուպացիոն զորք, հեռացիր Վրաստանից»:

Վախենալով, որ հանրահավաքային կրքերը կհամակեն ժողովրդական ավելի լայն զանգվածներ, Էդուարդ Շեւարդնաձեն դիմեց մի քայլի, որը հայտնի է որպես «Ազգային համաձայնության հոչակագիր», պարզելով իր ստորագրությունն այդ փաստաթղթի տակ:

Ավելի վաղ այդ փաստաթղթի ստորագրման նախաձեռնությամբ հանդես էր եկել Վրաստանի Քաղաքացիների միությունը Էդուարդ Շեւարդնաձեի ղեկավարած հասարակական-քաղաքական կազմակերպությունը: Ստորագրման արարողությանը մասնակցում էին հանրապետության 30-ից ավելի տարբեր կուսակցությունների ու կազմակերպությունների ղեկավարներ, որոնց թվում էին նաեւ ընդդիմադիր Ազգային դեմոկրատական կուսակցությունը, Լիբերալ կուսակցությունը, Վրաստանի Ժողովրդական Փաստաթուղթ ստորագրած Ժողովրդական դեկավար Նոդար Նարդենն գլխավորում է խորհրդարանի դաշնությանը եւ ազգային անվտանգության հանձնաժողովը: Նա հանդես եկավ Վրաստանի նկատմամբ Ռուսաստանի դիրքորոշման խիստ քննադատությամբ: Այսպես, նրա կարծիքով, «Ռուսաստանի այժմյան կուրսը ենթադրում է Վրաստանի միակողմանի եւ անվճար ծառայություններ, մինչդեռ երկու երկրների հարաբերությունները դեռեւ է կառուցվեն ծառայության դիմաց ծառայություն սկզբունքով»: Վերջին ժամանակներս Վրաստանի ղեկավարությունը «խրախուսում» է նաեւ մի քանի կուսակցությունների միավորումը բլոկների ու դաշինքների մեջ: Ըստ երեւույթին, ընդդիմության հետ այդպես աշխատելն ավելի դյուրին է:

Դաշինքներից մեկը Միացյալ հանրապետական կուսակցությունն է, որի մեջ մտել են Խարտիա-91, Ժողովրդական ճակատ եւ Հանրապետական կուսակցություն քաղաքական կազմակերպություններ: Ինչպես արդեն ասվեց, բոլոր երեք կուսակցությունների ղեկավարները խիստ հակառուսական դիրքորոշում ունեին վրաց-արխազական հակամարտության կարգավորման հարցում:

Խորհրդարանային սոցիալական ընդդիմության ղեկավար Իրակլի Ծիտեթգին խորհրդարանի ներսում բազմաթիվ «մարտերից» հետո արդեն այս տարվա մայիսին անցավ վճռական գործողությունների. հանրահավաքներ, տարբեր քաղաքական կուսակցություններից բլոկների ու դաշինքների ստեղծում: Իրակլի Ծիտեթգին հիմնական դաշտանությունը տեսնում է 1990-1992 թթ. գործած Կլոր սեղանի ուժերում, որն ստեղծել էր Վրաստանի նախկին նախագահ Զվիադ Գամսախուրդիան, Աբխազիայից եկած գաղթականներից կազմված շատ սոցիալական կազմակերպություններում:

Ինչպես արդեն հաղորդել ենք, Իրակլի Ծիտեթգին հացադուլ հայտարարեց, դադարեցնելով Շեւարդնաձեի անհաղթահարելի հրաժարականը, ընդդիմությանը շաբաթական մեկ ժամ ելույթային ժամանակ հատկացնել եւ այլն:

Ծիտեթգու դահանջները հիմնականում վկայում են այն մասին, որ նրա թիկունքին կանգնած է գուցե ոչ մեծ, բայց համախմբված ընդդիմություն, որը խորհրդարանում արդյունքի չհասնելով, դիմեց հանրահավաքների եւ հացադուլների:

Ընդդիմությանը քաղաքական հաջողությունից լիովին զրկելու համար Էդուարդ Շեւարդնաձեն իր ելույթներում ոչ միայն չի անհետում ընդդիմությանը, այլեւ առավելագույն ջանքերն է գործադրում դրա վարկաբեկման համար, ընդդիմությանը մեղադրելով ռեւանշիստական հանցանքների մեջ (գենք կրելը եւ այլն):

Վրաստանի ղեկավարն անձամբ չի անհետում այն հանգամանքը, որ ստեղծված անչափ բարդ իրավիճակում, իբրեւ անձամբ դեմ է ձեւավորի հասարակական կարծիքը, ըստ որում, կայուն կերպով: Ըստ երեւույթին, սրանով են բացատրվում նրա հանախական ելույթները հեռուստատեսությամբ եւ ռադիոյով:

Մյուս կողմից, Շեւարդնաձեն ձգտում է դեռեւս կառույցներում ներգրավելու նաեւ ընդդիմության «առողջ» ուժերը, ինչպես դա արվեց քաղաքական հայտնի գործիչ Ջաբա Իոսելիանիի դեպքում: Այդ ղեկավարի համար դեռեւս գործչի նկարագիր էր կերտվում շատ երկար ժամանակ (գրեթե մեկ տարի). Սուխումի անկման դահից մինչեւ այս տարվա մայիս: Մայիսի 26-ին Անկախության օրը, Ջաբա Իոսելիանին իր նշանավոր «Միսեդիոնի» կողքին կազմեց դաշնային

ՀԱՄԱՌՈՏ

Ուզբեկստանը նույնպես ստորագրեց

ԲՐՅՈՒՍԵԼ, 14 ՀՈՒԼԻՍ, ՓԱՍՏ: Ուզբեկստանը նույնպես միացավ ՆԱՏՕ-ի «Համագործակցություն հանուն խաղաղության ծրագրին»: Այժմ այդ ծրագրին միացած երկրների թիվը հասել է 22-ի: Ուզբեկստանի արտգործնախարարի խոսքերով, հիշյալ դաշնագիրը կնպաստի հաղթական կլիմայի բարելավման ինչպես Կենտրոնական Ասիայում, այնպես էլ Եւրոպայում:

Բալթյան երկրներին՝ ընդհանուր լեզու

ՏԱԼԼԻՆՆ, 14 ՀՈՒԼԻՍ, ՓԱՍՏ: Էստոնական խաղաղապահ կորդուսի 56 զինվորներ միացան Լիտվա-Լատվիա համատեղ զորավարժանքներին: Վարժանքների նպատակն է՝ ընդհանուր լեզու մշակել երեք երկրների հրամանատարության համար՝ հնարավոր համատեղ մարտական գործողություններ իրականացնելու ժամանակ գործադրելու նպատակով:

Ղրիմի դատգամավորներին՝ 4 մլն կարբ.

ՍԻՄՖԵՐՈՊՈԼ, 14 ՀՈՒԼԻՍ, ՓԱՍՏ: Ղրիմի խորհրդարանի դատգամավորները փակ դռների հետեւում ննջարկել ու հատատել են իրենց նվազագույն աշխատավարձը՝ 4 մլն կարբովանեցի չափով, այն դեպքում, երբ Ղրիմի մյուս բնակիչների համար այդ թիվը կազմում է միայն 400 հազար: Համեմատության համար ասենք, որ դա կազմում է մոտավորապես 25 հազար 600 դրամ՝ թերակղզում սահմանված 16 հազար 320 դրամ նվազագույն աշխատավարձի դեպքում:

ԱՊՀ խորհրդատվական-համակարգիչ խորհրդի նիստ

ՄՈՍԿՎԱ, 14 ՀՈՒԼԻՍ, ՓԱՍՏ: Հուլիսի 14-ին Մոսկվայում սկսվեց ԱՊՀ խորհրդատվական-համակարգիչ խորհրդի նիստ՝ փոխվարչապետների մակարդակով: Կենարկվի տնտեսական միասնացման խորացմանն ուղղված նախագծերի փաթեթը: Օրակարգում մոտ երեք տասնյակ հարց է ընդգրկված: Հայաստանի հանրապետությունից նիստին մասնակցում է ՀՀ փոխվարչապետ Վիգեն Չիտեչյանը:

ԱԶԳԲԵՋԱՆ

«Մեծ համաձայնագիրը լրամշակման կարիք ունի»

«Ազրբեջանը հանդես է գալիս հոգատ այն բանի, որ դարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ Հայաստանի եւ Ազրբեջանի միջեւ քաղաքական մեծ համաձայնագիրը ստորագրվի հնարավորին չափ շուտ եւ դրանում արտացոլված լինեն հանրապետության շահերը», չորեքշաբթի օրը Խաբարովսկում զորավարժության բացակցին հայտարարեց Ազրբեջանի արտաքին գործերի փոխնախարար Ֆրդիկ Զուլֆուգարովը, մեկնաբանելով Ռուսաստանի Դաշնության արտգործնախարարության հաստատ հանձնարարություններով դեսպան Վլադիմիր Կազիմիրովի այն հայտարարությունը, որ այդ համաձայնագիրը կարող է ստորագրվել արդեն մինչեւ 1994 թ. հուլիսի վերջը: Սակայն նա նշեց, որ դրա ներկայիս տարբերակը որոշակի լրամշակման կարիք ունի, թեեւ կարող է «հիմնական, որ Ազրբեջանն արտահայտի իր դիրքորոշումը որոշ վիճահարույց հանգամանքների վերաբերյալ»: «ԵԱՀԽ-ի Մինսկի խմբի 9 երկրների ներկայացուցիչների օրերս Վիեննայում ավարտված հանդիպումից հետո որոշակի առաջընթաց եղավ: ԵԱՀԽ-ն վերամբակում է ռուսաստանյան ժամանակացույցը, եւ ես կարծում եմ, որ հայ-ադրբեջանական հակամարտությունը կարգավորելու նպատակով մոտ ժամանակներս կշարունակվեն խորհրդակցությունները», վերջում ասաց հանրապետության արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարի տեղակալը:

Մյուս կողմից, հուլիսի 13-ին ադրբեջանցի բժիշկներն իրենց հայ գործընկերներին կոչ արեցին միավորել ջանքերը հանուն ներկա եւ գալիք սերունդների արյունահեղությունը դադարեցնելու համար: Դրանց հանդիպմանը, Ադրբեջանի եւ Հայաստանի ժողովուրդների բարեկամության ու հարեւանության դարավոր ավանդույթները, նրանց բանակցությունը եւ վերջապես դպրոցական անհեռանկարաղեցությունը բոլոր նախադրյալներն ստեղծում են շրջանում խաղաղության շուտափույթ հաստատման համար: Ինչպես ընդգծվում է Ադրբեջանի բժիշկների ընկերակցության դիմումի մեջ, վերջերս դիմակայությունը հանգեցրել է երկու հարեւան պետությունների ժողովուրդների առողջության կտրուկ վատթարացման, բնապահպանական եւ համաճարակաբանական աղետալի իրավիճակի: Դիմումի հեղինակների կարծիքով, հասունացել է հանուն խաղաղության ու բարգավաճման Կովկասի բժիշկների շարժում ստեղծելու անհրաժեշտությունը: Նրանց կարծիքով, այդ ազնիվ առաքելությունը կարող են ստանձնել Վրաստանի բժիշկները, Թբիլիսիում կազմակերպելով անդրկովկասյան երեք հանրապետությունների բուժաշխատողների հանդիպում:

ԻՏԱՐ-ՏԱՍՍ, Նոյյան տարած

Առաջին կիսամյակում 4,7 մլն տոննա նավթ

ԲԱԿՈՒ, 13 ՀՈՒԼԻՍ, ՓԱՍՏ: 1994 թվականի առաջին կիսամյակում Ադրբեջանը արտադրել է 4,7 մլն տոննա նավթ, ինչը կազմում է նախատեսվածի 98,3 տոկոսը կամ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի արտադրանքի 90,6 տոկոսը: Միաժամանակ, այս տարվա առաջին կիսամյակում Ադրբեջանում արտադրվել է 3,07 մլրդ խմ գազ, որը համապատասխանաբար կազմում է 37,8 եւ 88,8 տոկոս: Հանրապետության ոլորտային նավթային ընկերության տեղեկանքի համաձայն, 4,63 տոննա նավթ ուղարկվել է վերամշակման, նույն նպատակի համար տրամադրվել է 2,62 մլրդ խմ բնական գազ:

1994 թվականի հունվարից հուլիս ընկած ժամանակահատվածում Ադրբեջանի նավթագազային արդյունաբերությունը հորատել է 105400 մ ընդհանուր խորությամբ հորատանցքեր: Պետական նավթային ընկերությունը հունիս ամսին արդյունահանել է 811750 տոննա նավթ, ինչը 0,1 տոկոսով գերազանցում է սահմանված չափաքաժինը: Սակայն նավթի ու գազի արդյունաբերությունն Ադրբեջանում տակավին կտնջված է ֆինանսական խնդիրների առաջ: Չնայած նավթամթերքի բանկացմանը, նավթի մեկ տոննան Ադրբեջանում վաճառվում է 7500 մանաթով: Մասնագետների կարծիքով, արտադրությունը կարող է արդյունավետ դառնալ, եթե այդ գինը հասցվի 11500 մանաթի: Այսօր ոլորտային նավթային ընկերության դարձը կազմում է 14 մլրդ մանաթ: Միաժամանակ ավելացնենք, որ հուլիսի 12-ին Ադրբեջանի ազգային բանկը մեկ ամերիկյան դոլարը վաճառում էր 1100 մանաթով:

digitised by A.R.A.R.@

հրատարակություն

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Վլադիմիր Ստուպիին. «Ոմանց դուր չի գալիս Ղարաբաղի հարցում մեր խաղաղարար նախաձեռնությունը»

- Վլադիմիր Պետրովիչ, վերջին ժամանակներս հանրապետական մամուլում, մասնավորապես «Գոլոս Արմենիի» թերթում արդեն է սկսվել դեսպանների դեմ: Տպագրվել է ելցինին ուղղված բաց նամակ: Ի՞նչ եք կարծում, դա անձամբ Ձե՞ր դեմ է, թե Ռուսաստանի:

- Այդ մասին չեմ ուզում մանրամասն խոսել, քանի որ «Գոլոս Արմենիի» թերթի հրապարակումները շատ կոպիտ են, լի նենգափոխումներով, ուղղակի վիրավորանքներով: Թե դրանք ինչով են պայմանավորված, չգիտեմ: Գուցե ինչ որ բարդույթով կամ պարզապես անիրազեկությամբ: Քանզի դեսպանին մեղադրում են այն բանում, ինչով նա պարտավոր է զբաղվել: Նրան վերագրում են այն, ինչ ինքը չի ասել: Ես երբեք որեւէ մեկին դրական կամ բացասական գնահատական չեմ տվել. ոչ պետական կառույցներին, ոչ քաղաքական կուսակցություններին, այդ թվում ընդդիմադիր, ոչ էլ հասարակական կազմակերպություններին: Դա դեսպանի գործը չէ: Ես խոսում եմ այլ բաների մասին: Խոսում եմ այն գործոնների մասին, որոնք նպաստում են Հայաստանի եւ Ռուսաստանի միջպետական հարաբերությունների զարգացմանը: Այդ գործոնների թվում է նախ եւ առաջ մեր նախագահների եւ կառավարությունների հանդիպումները: Ես կարող եմ միայն ուրախանալ այդ առթիվ եւ հենց այդ մասին եմ խոսում: Ոմանց դուր չի գալիս այդ մոտեցումը: Սակայն դեսպանն ուրիշ մոտեցում չի կարող ունենալ: Եւ դեսպանի դեմ ձեռնարկվող հարձակումները միշտ ստանում են նրա ներկայացրած երկրին ուղղված հարձակումների բնույթ, իսկ տվյալ դեպքում գրոհն սկսել է այն թերթը, որը պարբերաբար պախարակում է Ռուսաստանի կառավարությանն ու նախագահին եւ քարոզում ԳԿՀՊ-ի եւ 1993 թ. հոկտեմբերին պարտություն կրած մյուս անձանց հայացքները: Որոնց դեպքում ես չեմ կարող դա անտեսել: Ես ներկայացնում եմ Ռուսաստանի դեսպանությունը. եւ երբ նման ուղղվածությամբ արշավ է մղվում, իմ իրավունքն է ասել, որ դրան համաձայն չեմ եւ դատապարտում եմ այդ արշավը: Ի դեպ, դրանով չի զբաղվում Հայաստանի քաղաքական լուրջ կուսակցություններից որեւէ մեկը: Իսկ թե ով է սնուցում «Գոլոսի» արշավը, չգիտեմ: Կարող եմ միայն ասել, որ չգիտես ինչու այն լիովին համապատասխանում է վերջերս Ռուսաստանին հասցեագրված «կայսերական նկրտումների» եւ Անդրկովկասում տիրապետություն անելու ձգտման մեղադրանքներին, ինչը պարզապես կեղծիք է. Գաղտնիք չէ, որ այդ պնդումների աղբյուրը ամերիկյան եւ աւեւմտաբերպական որոշ շրջանակներ են, որոնք չեն էլ թաքցնում դա: Բառացիորեն օրերս հրապարակվեցին ԵԱՀԽ Մինսկի խմբում ԱՄՆ-ի նախկին ներկայացուցիչ Մարեսկայի խոսքերը, որոնք ասված են հենց այդ ոգով: Ոմանց դուր չի գալիս Ղարաբաղի հարցում մեր խաղաղարար նախաձեռնությունը, ոմանք էլ չեն ուզում, որ ռուսական զորքերը եւ ռուս քաղաքացիները Վրաստանին ու Աբխազիային օգնեն գտնելու խաղաղ լուծում: Ես չեմ կասկածում, որ հակառուսական արշավի նախաձեռնողներին չի հաջողվել եւ չի հաջողվի լուրջ աջակցություն գտնել հայ հասարակայնության մեջ:

Ի դեպ, մենք վերերանների կազմակերպությունների հետ եւս ունեցել ենք եւ ունենք լավ հարաբերություններ: Հենց վերջերս լուր հրապարակվեց այն մասին, որ իմ աշխատասենյակում կայացել է հանդիպում վերերանների կազմակերպությունների ղեկավարների հետ: Խոսել ենք այն մասին, թե ինչպես է ընթանում Հաղթանակի 50-ամյակի նախապատրաստությունը: Նույնիսկ այս հարցում ինձ հասցեագրված մեղադրանքները սահող են: Միակ բանը, որ ես չեմ անում ու չեմ անի, դա հանրահավաքներին, մանավանդ հակակառավարական հանրահավաքներին մասնակցելն է:

- Ձեզ պատասխանեցին սահմանադրական ուժ մրցությունների նախագահներ, թեեւ կասկածում էին այն բանում, թե Դուք չդիտեք թերթին ենթադրելի միջամտավորության համար: Դեսպաններն իրավունք ունե՞ն արդյոք իրենց կարծիքը հայտնել մամուլի այս կամ այն հրապարակման առթիվ:

- Անկասկած: Մանավանդ, երբ արծարծվում են դեսպանի ներկայացրած երկրի կառավարության հարցը, նրա արտաքին քաղաքականությունը, երկկողմ հարաբերությունները: Սա դեսպանի ջանքերով իր երկրի պետական շահերի պաշտպանության կողմերից մեկն է:

- Այս ամենից հետո Մոսկվայից ելնա՞վ արդյոք որեւէ արձագանք:

- Ոչ: Դրա կարիքը չկա, քանզի դեսպանությունն ի վիճակի է պատասխանելու իր երկրի պատիվը:

- Քարիզում դուք կարողանու՞մ էիք նույնքան անկեղծ արտահայտվել, որքան այժմ:

- Ես Ֆրանսիայում դեսպան չեմ եղել. ղեկավարում էի դեսպանության արտաքին քաղաքականության խումբը եւ շատ հաճախ դասախոսություններով հանդես գալիս ամենատարբեր լսարաններ առջեւ: Եւ այն ժամանակ ես ասում էի այն, ինչ մտածում էի: Արտահայտում էի իմ ինքնատիպ վերաբերմունքը զանգվածային լրատվության միջոցների նկատմամբ, երբ նրանք հարձակումներ էին գործում իմ երկրի, իմ ժողովրդի վրա:

- Ձեր առաջին հարցազրույցներից մեկում Դուք համաձայնեցիք, որ մեր շրջանում Ռուսաստանը հստակ քաղաքականություն չունի: Երկու տարի անց ի՞նչ է փոխվել: Դա ի՞նչ քաղաքականություն է, Դուք ինչպիսի՞ դեր եք խաղացել այդ քաղաքականության մեջ:

- Նախ՝ պարզություն մտցնենք: Ես չեմ ասել, թե հստակ քաղաքականություն չկա: Ես ասել եմ, թե քաղաքականությունը գտնվում է կազմավորման փուլում: Այդ քաղաքականության ընդհանուր սկզբունքները հայտնի են: Սակայն մանրամասնությունները երկու տարի առաջ դեռ չէին մտածվել:

Ռուսաստանի արտաքին քաղաքականության ընդհանուր սկզբունքները ձեւակերպված են: Ի դեպ, այն մեծապես փոխ է առնված խորհրդային քաղաքականությունից: Խորհրդային քաղաքականության մեջ կային զգալի թվով դրական սկզբունքներ եւ գաղափարներ:

Աշխարհը մինչեւ օրս ապրում է միջազգային այն փաստաթղթերի հիման վրա, որոնք ստեղծվել են խորհրդային դիվանագիտության մասնակցությամբ, սկսած ՄԱԿ-ի կանոնադրությունից, Հելսինկիի եզրափակիչ ակտից: Կան բազմաթիվ այլ պայմանագրեր ու միջազգագրեր, որոնք կնքվել են խորհրդային ժամանակաշրջանում եւ աշխարհին պետք են այսօր: Ուստի Ռուսաստանի արտաքին քաղաքականության հիմքն արդեն առկա էր, իսկ մանրակրկիտ լրամշակումը նոր գործ է. չէ՞ որ մենք միմյանց համար օտար պետություններ չենք եղել: Մենք չենք ունեցել Հայաստանի հանդեպ Ռուսաստանի արտաքին քաղաքականությամբ զբաղվող դիվանագետներ: Նրանք պարզապես չեն եղել: Ես նույնպես չեմ զբաղվել դրանով: Ի դեպ, մեր դիվանագիտական հարաբերությունները երկու տարուց ոչ ավելի ժամանակահատված են ընդգրկում: Իսկ դեսպանատունը երեւանում փաստորեն գոյություն ունի 1992 թ. նոյեմբերից: Այնպես որ երկու տարի էլ չկա: Այդ ժամանակամիջոցում Ռուսաստանում մշակվեցին արտաքին քաղաքական եւ ռազմական դոկտրինների հիմունքները: Իսկ մանրամասնությունները բյուրեղանում են կոնկրետ համագործակցության ընթացքում:

Մենք արդեն բավական ծավալուն իրավաբանական հիմք ունենք երկկողմ պայմանագրերի ու համաձայնագրերի տեսքով: Շատ կարեւոր երկրորդ ոլորտը համագործակցությունն է ԱՊՀ-ի ներսում: Այնտեղ նույնպես ստեղծվում է իրավաբանական հիմք: Դեսպանությունն, իհարկե, մասնակցել է դրան: Դեսպանությունը սովորում է ճանաչել Հայաստանը եւ նրա խնդիրները: Եւ այդ ճանաչման հիման վրա ծնունդ են առնում լրատվական ու վերլուծական փաստաթղթեր եւ առաջարկություններ, որոնք մենք ուղարկում ենք Մոսկվա: Դրանք օգտագործվում են Հայաստանի հանդեպ մեր քաղաքականության ձեւավորման ընթացքում: Ուստի ես չեմ կարող չուրախանալ, երբ մեր պետությունների եւ դրանց ղեկավարների միջեւ ստեղծվում են ոչ թե սոսկ բնականոն, այլեւ իրոք դաշնակցային հարաբերություններ:

Բայց մենք ունենք նաեւ մեր դժվարությունները: Օրինակ, ռուսական զորքերի կարգավիճակին առնչվող պայմանագրի վավերացման հարցում տեղի ունեցավ շատ տարօրինակ պատմություն: Ռուսաստանի Գերագույն խորհուրդն այդ պայմանագիրը վավերացրեց 1993 թ. փետրվարի 25-ին: Հայաստանի Գերագույն խորհուրդը շատ ուշադիր ուսումնասիրում էր այդ փաստաթուղթը: Ինձ թվում էր, թե մենք բավական փաստարկված կերպով պատասխանում ենք մեր գործընկեր պատգամավորների առաջադրած հարցերին: Սակայն 1994 թ. հունիսի 22-ին Հայաստանի Գերագույն խորհուրդն ընդունեց որոշում, որի առաջին կետում նշվում է, որ պայմանագիրը վավերացվում է «վերապահումներով»: Երկկողմ պայմանագրերի վավերացումը վերապահումներով չի լինում: Բուն պայմանագիրը նախաշեմում է փոփոխությունների հնարավորություն: Դա բնական է: Բայց փոփոխություններ կատարվում են երկու կողմերի համաձայնությամբ: Եւ փոփոխությունների հարց առաջադրելու համար պարզապես հարկավոր է, որ պայմանագիրն ուժի մեջ մտնի, իսկ դրա համար պետք է այն վավերացնել՝ առանց «վերապահումների», որոնք մանավանդ

կրում են պայմանագրի մի շարք հոդվածների անլացման բնույթ:

- Փաստորեն պայմանագիրը չի՞ գործում:

- Փաստորեն այդպես է:

Ըստ էության, Հայաստանում ռուսական զորքերի եւ զինծառայողների կարգավիճակի հարցերը լուծվում են ջենտլմենական համաձայնություններ հիման վրա: Ռուս եւ հայ զինվորականների հարաբերությունները լավ են: Դա զինական եղբայրություն է: Սակայն իրավաբանական անկարգավորվածությունը խոչընդոտներ է ստեղծում մեր ռազմական համագործակցության մեխանիզմի բնականոն գործողության հարցում:

- Ձեր հեռանալը կազդի՞ հայ-ռուսական հարաբերությունների վրա:

- Հարաբերությունները չպետք է արմատապես կախված լինեն դեսպանի անձից, քանի որ դրանք սահմանում են կառավարությունները: Դեսպանից կախված է այն լրատվության հավաստիության, առաջարկությունների հավանության եւ վերլուծության խորության աստիճանը, որոնք նա ուղարկում է իր կառավարությանը: Հայաստանում Ռուսաստանի առաջին դեսպանը եւ դեսպանության առաջատար խումբը, համոզված եմ, արդեն կատարել են իրենց առաքելության հիմնական մասը. երկկողմ հարաբերությունների ուղիներ են բացել, մասնակցել այդ ուղղությամբ Ռուսաստանի արտաքին քաղաքական մոտեցումների ձեւավորմանը, հավի առնելով Ռուսաստանի զինված ուժերն այդ շրջանում: Կարծում եմ, մեկ ուրիշ անձնավորություն չի ձգենա դուրս գալ այդ ուղիներից: Ապեմ, Ռուսաստանի կառավարությունն էլ բույլ չի տա:

Սրան՝ արժի ավելացնել, որ մենք միայն միջպետական հարաբերություններ չենք կառուցում: Մենք կարող ենք մենք փաստորեն բոլոր ընդդիմադիր կուսակցությունների հետ: Այդ մասին գիտեն Հայաստանի ղեկավարները, որոնք ի դեպ, երբեմն չեն առարկել դրա դեմ: Մենք կարող ունենք բազմաթիվ հասարակական կազմակերպությունների, ստեղծագործական միությունների, բուհերի, գիտությունների ակադեմիայի, ինստիտուտների, բնականաբար, նաեւ լրագրողների հետ: Սա բնականոն դիվանագիտական աշխատանք է: Եւ հուսով եմ որեւէ մեկն ուզենա հրաժարվել դրանից:

- Այս ժամանակամիջոցում Հայաստանի հանդեպ Ձեր վերաբերմունքը փոխվե՞լ է արդյոք:

- Այն չի փոխվել: Պարզապես ես սկսել եմ ավելի լավ ճանաչել Հայաստանը: Ես այն պատկերացնում էի տեսականորեն, որպես սեփական պատմություն, մշակույթ, տառապանքներ ունեցող երկիր: Ես կարելացանով հանդիպեցի ձեր ժողովրդի հանդեպ: Ձեզ հետ շրջափակումների երկու ծմեռ ապրեցի: Բայց դրանից իմ հարգանքն այս երկրի հանդեպ չնվազեց, այլեւ աճեց: Ես հիանալի եմ, որ Հայաստանը վարպետների երկիր է: Այստեղ ծանոթացա Նարեկացու եւ Քուչակի ստեղծագործություններին: Հնարավորություն ստացա ոչ միայն ընթերցել, այլեւ անձամբ ծանոթանալ Հրանտ Մաթեւոսյանի, Գեւորգ Էմինի, Միլվա Կապուտիկյանի, Ռազմիկ Դավոյանի եւ Զորի Բալայանի, հիանալի գիտնականների, նկարիչների, երաժիշտների, դերասանների հետ: Այստեղ ապրելով արդյոք չե՞մ հիասթափվել: Ոչ: Իմ հարգանքը դարձել է ավելի խոր ու գիտակցված:

- Մենք չխոսեցինք այն մասին, թե ներկայումս ինչ իրավիճակ է տիրում մեր տարածաշրջանում: Ղարաբաղի հարցը Ձեր գործունեության գլխավոր ուղղություններից մեկն է:

- Դա այնքան էլ ստույգ չէ: Մեր ղեկավարությունը կոնֆլիկտային իրավիճակների համար պրոֆեսիոնալ դիվանագետներից հատուկ մարդիկ է առանձնացրել: Եւ Ղարաբաղի խնդրի համար 1992 թ. նշանակվեց Վլադիմիր Կազիմիրովը: Այդ խնդրով զբաղվում են նա եւ իր թիմը: Նրանք գիտեն բոլոր մանրամասնությունները, իրենք առաջարկում են կարգավորման ծրագրեր եւ դրանք ներկայում հակամարտության բոլոր կողմերի հետ:

Իհարկե, մենք նույնպես հետեւում ենք դրան: Ես իմ մոտեցումն ունեմ այդ խնդրի նկատմամբ: Արդեն վաղուց ասում եմ, որ չկա այնպիսի ժողովուրդ, որին հնարավոր լիներ զրկել ինքնորոշման, ճակատագրի ազատ տնօրինման բնական իրավունքից: Եւ գտնում եմ, որ տարածքային ամբողջականության եւ սահմանների անխախտության սկզբունքը բնավ չի հակասում ինքնորոշման սկզբունքին, որը Հելսինկիի եզրափակիչ ակտում ձեւակերպված է, որպես սեփական քաղաքական կամ այլ կարգավիճակ ընտրելու ժողովրդի իրավունք: Այդ սկզբունքներն իրական են միայն համատեղ: Ի դեպ, դրանք ոչ թե երեքն են, այլ տասը: Բացի դրանից տարածքային ամբողջականության սկզբունքը պետք է կիրառվի նաեւ նախկին ԽՍՀՄ ինքնավարությունների նկատմամբ, անկախ այն բանից, թե որ հանրապետության կազմում էին դրանք:

Ես գտնում եմ, որ դարաբաղյան խնդրի կարգավորման համար առկա է իրավաբանական հիմք: Այն կազմում են միջազգային իրավունքի գործող նորմերը եւ նախեւառաջ Հելսինկյան ակտի սկզբունքները:

Ինչ վերաբերում է կոնկրետ աշխատանքին, կարգավորման փուլերը դեռ չեն սկսվել: Առայժմ բանակցություններ են վարվում այն մասին, թե ինչ ոլորտում պետք է լինեն կարգավորումը եւ այդ փուլերը: Այդ գործը ձգձգվում է երկու տարուց ավելի: Ըստ երեւույթին, ոմանք այնքան էլ չեն ուզում նախկին Միության տարածքում հակամարտությունների վերացում: Ուստի չգիտես ինչու ստացվում է այնպես, հենց որ հակամարտ կողմերը կամ Ռուսաստանը հանդես են գալիս ինչ որ նախաձեռնությամբ, որը կարգավորման դուռ է բացում, սկսվում են դրան խոչընդոտող շարժումներ: Գաղտնիք չէ, որ 1993 թ. ձեռնարկվեցին Ռուսաստանի միջնորդությամբ Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի ներկայացուցիչների անմիջական բանակցությունների սկսելու առաջին փորձերը: Մի քանի ամիս դրանք հաջողացրեց չպատասխանել այդ փորձերը: Ի հայտ եկավ Ռուսաստանի պատասխանությունը՝ եկեք դադարեցնենք պատերազմը, առա ինքներդ կարգավորման մյուս հարցերը: Իսկ պատերազմը դադարեցնելու համար պետք է առաջադրել հրադադար, հեռացնել պատերազմողներին եւ նրանց միջեւ տեղաբաշխել խաղաղարար ուժեր: Ռուսաստանը դեմ չէ, որ այդ ուժերը կազմված լինեն ԵԱՀԽ մյուս երկրների ներկայացուցիչներից: Բայց չէ՞ որ առայժմ այդ նպատակով ոչ ոք չի առաջարկում իր զինվորներին, իսկ Ռուսաստանը պատրաստ է: Հենց որ այդ առաջարկությունն արվեց, քարոզչական գրոհ սկսվեց ռուսական խաղաղարար ուժերի դեմ, որին, ցավոք, միացան նաեւ հայկական որոշ թերթեր, ինչպես հիշյալ «Գոլոսը», որոշ քաղաքագետներ, որոնց թվում է Ռուսաստանի խաղաղարար ուժերին բացահայտորեն դեմ պատգամավոր Դավիթ Վարդանյանը՝ Հայաստանում ռուսական զորքերի կարգավիճակին առնչվող պայմանագրի վավերացման ձախողման նախաձեռնողներից մեկը:

